— Ահա, վերջապէս, այն վայրը, ուր լռութիւնը տիրական է,— ասեց մի ասպետ եւ ոտքը դեռնին զարկեց:

Նուլ, երկար մի դղրդոց նրան պատասխանեց:

— Այստեղ դեռ կեանք կայ,— ասացին ընկերները եւ ճամբան շարունակեցին:

Գնացին օրեր եւ գիշերներ, անցան նոր հսկայ տարածութիւններ, եւ անապատը դեռ շարունակում էր դղրդալ:

Մի օր էլ հասան ահաւոր անդնդի մի ծայրը:

— Ահա, վերջապէս, այն վայրը, ուր լռութիւնը տիրական է,— ասեց երկրորդ ասպետը եւ ձայն տուեց անդունդին:

Ամբողջ անդունդը սկսեց ձայնել:

— Այստեղ դեռ կեանք կայ ասացին ընկերները եւ ճամբան շարունակեցին, անդունդը եզերելով:

Գալեցին, քալեցին եւ մի օր էլ հասան այնտեղ, ուր երկիրը վերջանում էր, ուր պարապն էր ու մերկ տարածութիւնը:

— Վերջապէ՛ս, վերջապէ՛ս,— բացականչեցին երեքն էլ միաձայն,— ահա՛ լռութիւնը:

Բայց տարածութիւնը արձագանգեց նրանց բացականչութեան ու՝ ձայները թաւալուելով պարապի մէջ ա՛յնքան մեծցան եւ ա՛յնպիսի աղմուկ ստեղծեցին, որ ասպետները սարսափած յետ եկան:

Ուզում եմ ասել, որ մեր ձայնի առջեւ, բայց մեր սեփական ձայնի առջեւ՝ ոչ մի անապատ անտարբեր կը մնայ:

Անապատը մեր մէջ է: Մահը մեզ հետ է:

Երբ ուզենք արթնանալ, բողբոջները կը ծլին, ու հայ կեանքը պարտէզի կը վերածուի:

* * *

Որբերի գիւղը մի փողոց է: Երկու կողմից, փոքրիկ գեղջկական տնակներ: Ամէն մի տան մէջ հինգ հինգ տղայ են ապրում: Նոր ծառեր են տնկել, առու են չինում: Շէնքերից մէկի մէջ՝ դպրոց, սեղանատուն եւ ուսուցիչների սենեակները:

Փողոցի ծայրում խարոյկ են վառել, տղաքը տաքանում են: Քիչ հեռում մի քանի ոչխարներ եւ նեղլիկ դաշտ, ուր բանջարեղէն են տնկում:

Ոչ մի շարժում: Անապատը ամէնքի հետ խօսում է եւ ծուլօրէն, անտարբեր ման գալիս:

Ամառը կրակ է թափում: Ձմեռը անձրեւը լիճեր է կազմում եւ լպրծուն, դեղին ցեխի մէջ մխրճում տղոց տխուր սիրտերը:

Նայում եմ, աչքերի մէջ՝ անասելի ճանձրոյթ եւ տրտմութիւն: Քարացած անտարբերութիւն: Յոռետես, արդէն ծերացած նայուացքներ ու ապշութիւն:

— Ուզում ենք,— ասում է ամերիկացին,— որ որբերը ստեղծեն սեփական կեանք:

Լեցրել են հաւերի պէս, հինգ հինգ հոգի տնակների մէջ եւ ուզում են, որ սեփական կեանք ստեղծեն:

Հայերէ՛ն խօսենք:

Որբերը մեծ մասամբ փախչում են: Երբ Թիֆլիս գնացող գնացքը Սարդարապատ կայարանում կանգ է առնում, ոմանք մտնում են վագոնի տակի երկաթների վրայ եւ մեկնում են: Գնում են դէպի անյայտ: Ուր որ լինի: Մուրացկանութիւն են անում, բանուորութիւն, գողութիւն իսկ: Գնում են:

Ոմանք մօտակայ գիւղերն են փախչում: Ամառը թաքնւում են պարտէզների մէջ կամ աշխատանք խնդրում: Հայ գիւղեր են, երբեմն խղճում են, ներս ընդունում, հաց տալիս:

Ամուսնանալ են ուզում:

— Մենք յոգնել ենք որբ լինելուց,— ասում է մէկը:

Առաւօտ բորոտանը փչում է: Վեր են կենում, անկողինները չինում, լուացւում: Թէյ: Ցեխերի մէջ տապլտկելով իբր թէ դպրոց են գնում՝ ի՞նչ սորվելու:

Զանգը տալիս են՝ ճաշ: Նոյն ընկերները, նոյն խօսակցութիւնները: Վաղո՞ւց յայտնի պատմութիւններ: Որբերի տխուր, ողբերգական պատմութիւններ: Էլ ոչ ոք չի ուզում լսել:

Ու այս անապատը: Անողոք, լերկ ու մերկ, որբի կեանքի նման: Ձմեռը ոռնում է, մայում, մլաւում: Անասելի մի տրտմութիւն: Ձիւնը: Բեւեռը եւ իր մահը: Բարեբախտաբար, երբեմն գայլեր են գալիս, եւ վտանգը ուրախացնում է:

Դեղնած շրթունքներով այդ տղաները երբեմն աղօթքներ են փախում:

Աղո՛թքներ:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան